ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «_30_»___12____2025թ **N 4094 - L**

2026 ԹՎԱԿԱՆԻ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ» ԾՐԱԳԻՐԸ, 2026 ԹՎԱԿԱՆԻ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զբոսաշրջության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N658-Լ որոշման հավելվածի 11-րդ կետի 17-րդ ենթակետով և 18-րդ կետի 21-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի հունիսի 11-ի N 404-Լ հրամանի հավելվածի 28.1-րդ կետով

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հաստատել՝

   1) 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

   2) 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը ՝ համաձայն N 2 հավելվածի.

3) 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն հրամանի առաջին կետի N1 հավելվածի 15-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված միջոցառումների իրականացման գնման գործընթացը գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության դրույթներին համապատասխան:
3. Նախարարության լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ 3-օրյա ժամկետում ապահովել սույն հրամանի տեղադրումը նախարարության պաշտոնական կայքէջում:
4. Նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահին՝ հրամանը հաստատվելուց հետո 5-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N1937-Ն որոշմամբ սահմանված կարգով ապահովել 2026 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով կազմակերպության ընտրության մրցութային հանձնաժողովի ստեղծումը:

2025-12-30 17:50:46 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2025 թվականի դեկտեմբերի -ի
N -Լ հրամանի

ԾՐԱԳԻՐ

2026 ԹՎԱԿԱՆԻ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ»

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Համաշխարհային տուրիզմի բարոմետրի վերջին հրատարակության համաձայն՝ 2025 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին միջազգային ճանապարհորդություններ է կատարել ավելի քան 1.1 միլիարդ զբոսաշրջիկ, ինչը մոտ 50 միլիոնով ավելի է, քան 2024 թվականի նույն ժամանակահատվածում: Միջազգային զբոսաշրջիկների ժամանումը 2025 թվականի առաջին ինը ամիսներին աճել է 5%-ով: Միջազգային զբոսաշրջությունը 2025 թվականին շարունակել է կայուն աճ գրանցել միջազգային ժամանումների և, ամենակարևորը, եկամուտների առումով՝ չնայած զբոսաշրջային ծառայությունների բարձր գնաճին և աշխարհաքաղաքական լարվածությանը: Աֆրիկայում գրանցվել է ժամանողների թիվը 10% աճ: Եվրոպան՝ աշխարհի ամենամեծ նպատակակետային տարածաշրջանը, 2025 թվականի հունվարից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում ընդունել է 625 միլիոն միջազգային զբոսաշրջիկ, ապահովելով 4% աճ 2024թ. նույն ամիսների համեմատ: Այս ժամանակահատվածում Ամերիկայի տարածաշրջանում գրանցել է 2% աճ, առաջին և երկրորդ եռամսյակներում՝ 3% աճով, սակայն երրորդ եռամսյակում գրանցվել է աննշան անկում (-1%): Մերձավոր Արևելք ժամանողների թիվը հունվար-սեպտեմբեր ամիսներին աճել է 2%-ով՝ համեմատած 2024 թվականի նույն ժամանակահատվածի հետ: Սա 33%-ով ավելի է, քան 2019 թվականին, ինչը համավարակից առաջ գրանցված ամենաստացված տարածաշրջանային արդյունքն է: Ասիա և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան ժամանողների թիվը 2025 թվականի առաջին ինը ամիսներին աճել է 8%-ով՝ հասնելով համավարակից առաջ գրանցված թվերի 90%-ին (-10%՝ 2019 թվականի հունվար-սեպտեմբերի համեմատ), քանի որ տարածաշրջանը շարունակում է վերականգնվել: Հյուսիսարևելյան Ասիան առանձնանում է ժամանողների 17%-անոց աճով՝ 2024 թվականի համեմատ, սակայն մնացել է 12%-ով ցածր 2019 թվականի մակարդակից:

   Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի հունվար-հոկտեմբերին զբոսաշրջային այցելությունների ընդհանուր քանակը կազմել է շուրջ **1,947,138:** 2024 թվականի հունվար-հոկտեմբերի **1,926,405** համեմատ նվազել է շուրջ 1 %: Իսկ 2019 թվականի հունվար-հոկտեմբերի **1,675,292** համեմատ աճել է շուրջ 16 %:

Տարեթիվ	Զբոս. այցելությունների քանակ
2025 թվականի հունվար-հոկտեմբեր	1,947,138
2024 թվականի հունվար-հոկտեմբեր	1,926,405
2023 թվականի հունվար- հոկտեմբեր	2,045,282
2022 թվականի հունվար- հոկտեմբեր	1,397,750
2021 թվականի հունվար- հոկտեմբեր	717,808
2019 թվականի հունվար- հոկտեմբեր	1,675,292

Ստորև ներկայացվում է 2019-2024թթ. զբոսաշրջային այցելությունները



2. 2025 թվականի հունվար-հոկտեմբերին Հայաստան ընդհանուր այցելությունների մեջ բացարձակ թվով աճ ապահոված տասը երկրներն են Ռուսաստանի Դաշնությունը, Վրաստանը, Իրանի Իսլամական Հանրապետությունը, ԱՄՆ-ն, Չինաստանը, Ֆրանսիան, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, Հնդկաստանը, Ուկրաինան և Իտալիան:
3. 2025 թվականի հունվար-հոկտեմբերին Հայաստան զբոսաշրջային աճ ապահոված 10 երկրները.

Ըստ քաղաքացիության	Զբոսաշրջիկների թվաքանակը	Ընդհանուրի մեջ %
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ	799,848	41
ՎՐԱՍՏԱՆ	238,172	12
ԻՐԱՆ	153,300	8
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ	56,270	3
ՉԻՆԱՍՏԱՆ	40,912	3
ՖՐԱՆՍԻԱ	32,367	2

ԳԵՐՄԱՆԻԱ	30,617	2
ՀՆԴԿԱՍՏԱՆ	23,009	1.18
ՈՒԿՐԱԻՆԱ	23,128	1.18
ԻՏԱԼԻԱ	18,731	1

4. Հիմք ընդունելով 2023 թվականին իրականացված զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտության տվյալները՝ մեկ ներգնա զբոսաշրջիկի Հայաստան կատարած միջին ծախսը մեկ այցելության ընթացքում գնահատվում է շուրջ 800 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:
5. 2025 թվականի հունվար-սեպտեմբերին ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է շուրջ 2,046,508՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ապահովելով շուրջ 3,8 % աճ: Ներքին զբոսաշրջության աճին նպաստում է նաև սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայությունը՝ ապահովելով ներքին զբոսաշրջային այցելությունների մինչև 10%-ը:
6. Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալների՝ ՀՀ տարածքում գործում է 1540 հյուրանոցային տնտեսության օբյեկտ, որոնց համարների ընդհանուր քանակը կազմում է շուրջ 12.243 https://www.armstat.am/file/article/sv_05_25a_460.pdf: Նշված հյուրանոցային տնտեսության օբյեկտներից շուրջ 35%-ը գտնվում է Երևանում, շուրջ 65%-ը՝ ՀՀ մարզերում:

1. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7. Զբոսաշրջությունը նպաստում է տնտեսության այլ ճյուղերի, այդ թվում՝ գյուղատնտեսության, առևտրի, արդյունաբերության զարգացմանը՝ ստեղծելով աշխատատեղեր և հնարավորություններ ինչպես քաղաքներում, այնպես էլ քաղաքային միջավայրից դուրս՝ կանխելով գյուղական բնակավայրերից բնակչության արտահոսքը և աշխատուժի արտագաղթը: Զբոսաշրջությունը անուղղակիորեն ազդում է հարակից ոլորտների վրա՝ ֆինանսական լրացուցիչ հոսքեր ապահովելով պետական և համայնքային բյուջե: Բնականաբար, զբոսաշրջության ոլորտի անկումներն իրենց հերթին բացասական ազդեցություն են թողնում հարակից ոլորտների վրա:
8. ՀՀ-ում զբոսաշրջությունը ունի ռազմավարական կարևորություն. զբոսաշրջությունը տնտեսության գերակա ճյուղ է, որն ունի զգալի ներուժ՝ նպաստելով տնտեսական աճին, ողջ երկրում աշխատատեղերի ստեղծմանը, ներդրումների ներգրավմանը, ենթակառուցվածքների և համաչափ տնտեսական զարգացմանը, մշակութային ժառանգության պահպանմանը և զարգացմանը:
9. «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2026 թվականի ծրագիրն (այսուհետ՝ Ծրագիր) ուղղված է զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության իրականացմանը, մասնավորապես՝

1) զբոսաշրջության բնագավառում ինստիտուցիոնալ բարեփոխմանը.
2) Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության բարձրացմանը և թիրախավորված զբոսաշրջային շուկաներում առավել ակտիվ մարկետինգային քաղաքականության իրականացմանը.
3) զբոսաշրջության ոլորտի վիճակագրական և տեղեկատվական համակարգի կատարելագործմանը.
4) զբոսաշրջության բնագավառում ծառայությունների որակի բարելավմանը, միջազգային չափանիշներին համապատասխան որակավորման համակարգի ներդրմանը, մարդկային ռեսուրսների զարգացմանը.
5) Հայաստանի համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, տեղական ավանդույթների վերականգնմանը, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, նոր զբոսաշրջային ուղղությունների ձևավորմանը և միջազգային ու ներքին շուկայում պատշաճ ներկայացմանը:

2. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐԸ

10. Ծրագրի նպատակն է նպաստել.
1) Հայաստան զբոսաշրջային այցելությունների շարունակական ավելացմանը և ներքին զբոսաշրջության խթանմանը.
2) համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի զբաղեցրած տեղի և հասանելիության բարձրացմանը՝ ներկայացնելով հայկական զբոսաշրջային արդյունքը երեք հիմնական ուղղություններով՝ մշակութային, գաստրո (խոհանոց և գինի) և արկածային.
3) զբոսաշրջիկների՝ Հայաստանում գտնվելու ժամանակահատվածի երկարաձգմանը և ծախսերի հնարավորությունների ընդլայնմանը.
4) Հայաստանի կայուն և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը.
5) ենթակառուցվածքների և մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը.
6) զբոսաշրջության ոլորտի կրթության բարելավմանը և մասնագիտական որակավորման համակարգի ամրապնդմանը.
7) միջազգային համագործակցության ամրապնդմանը և շարունակական ակտիվացմանը:

11. Ծրագրի խնդիրն է ապահովել.

1) Համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի ճանաչելիության ավելի բարձր մակարդակը.
2) նոր, մրցունակ զբոսաշրջային արդյունքի առկայությունը.
3) զբոսաշրջության ոլորտում որակի համակարգի կատարելագործմանն ուղղված ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացումը.
4) միջազգային, տարածաշրջանային և այլ կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության ապահովումը, այլ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացումը.
5) վիճակագրական տվյալների հավաքագրման կայուն մեխանիզմի ստեղծումը:

3. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

12. Ծրագրի իրականացումն ուղղված է Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության և մրցունակության մակարդակի բարձրացմանը, համաշխարհային շուկայում Հայաստանի՝ որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկրի նկարագրի ամրապնդմանը՝ համաշխարհային շուկայում բարելավելով Հայաստանի վարկանիշը:
13. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է միջազգային զբոսաշրջիկների թվի ավելացում՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը շուրջ 10%-ով, ինչին կնպաստի հետևյալ միջոցառումների իրականացումը՝

1.Զբոսաշրջության ոլորտի ինստիտուցիոնալ բարեփոխումների շրջանակում նախատեսվում է զբոսաշրջության ոլորտի նորմատիվ իրավական ակտերի մշակում և վիճակագրական համակարգի բարելավում, տվյալների հավաքագրում: Նշված արդյունքային ցուցանիշներին հասնելու նպատակով Ծրագրով առաջարկվում է.

1.1 Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի սպասարկում (*12 ամիս*) միջոցառման շրջանակում նախատեսվում է Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգչային ծրագրի տարեկան սպասարկում՝ զբոսաշրջության ոլորտի վիճակագրական տվյալների հավաքագրում՝ ըստ զբոսաշրջային այցելությունների աշխարհագրական բաշխվածության, սեռատարիքային կազմի, կրկնվող այցելությունների, սահմանային անցման կետերի տվյալների ստացում և ոլորտում որակյալ հետազոտությունների իրականացում *(հավելված 3, կետ 1.1):*

1.2 Travelinsights («Թրավելինսայթս») հարթակի սպասարկում՝ հարթակի 10 ամիս սպասարկում՝ արհեստական բանականության գործիքակազմի շարունակական բարելավմամբ և նոր ֆունկցիոնալության ինտեգրմամբ *(հավելված 3, կետ 1.2):*

1.3 «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակում և կիրարկում՝ առնվազն 3 ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակում և ընդունում (*հավելված 3, կետ 1.3):*

2.Զբոսաշրջության ոլորտի մարկետինգային և խթանման գործընթացի շրջանակներում միջազգային զբոսաշրջային շուկայի և զբոսաշրջության զարգացման միտումների վերլուծության արդյունքում թիրախային երկրների ընտրություն և ակտիվ մարկետինգային միջոցառումների կազմակերպում: Նշված ցուցանիշն ունենալու համար անհրաժեշտ է ապահովել *(հավելված 3, կետ 2)*՝

2.1 Մասնակցություն առնվազն 4 չորս միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին՝ հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում և խթանում՝ ապահովելով յուրաքանչյուր ցուցահանդեսին առնվազն 5 զբոսաշրջային օպերատորի մասնակցություն: Զբոսաշրջության կոմիտեն միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների մասնակցության ընտրությունը կատարում է կիրառելի ընթացակարգ(եր)ի հիման վրա, իսկ ընտրության կատարման պահին նման ընթացակարգերի բացակայության դեպքում՝ հիմնվելով թիրախային, ներուժ ունեցող (օրինակ՝ եվրոպական, արաբական, ասիական, ամերիկյան և այլ) երկրներում մարկետինգային գործողությունների, սոցիալական հարթակներում մասնավոր հատվածի շրջանում հարցման, ինչպես նաև Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրներում, Պարսից ծոցի արաբական և Եվրոպական միության անդամ պետություններում անցկացվելիք ամենախոշոր զբոսաշրջային ցուցահանդեսներին մասնակցության նպատակահարմարության սկզբունքի վրա (*հավելված 3, կետ 2.1):*

2.2 Համագործակցություն առնվազն 4 չորս միջազգային գործընկերների հետ՝ Զբոսաշրջության կոմիտեի կողմից միջազգային ընկերությունների (օրինակ՝ ԲիԲիՍի (BBC), Էքսպիդիա (Expidia) և/կամ Եվրոնյուզ (Euronews)) և թիրախային ավիաընկերությունների ընտրությունը կատարվում է կիրառելի ընթացակարգ(եր)ի հիման վրա, իսկ ընտրության կատարման պահին նման ընթացակարգերի բացակայության դեպքում՝ հիմնվելով տվյալ թիրախային շուկայի հետ համագործակցության, ինչպես նաև դեպի Հայաստան չվերթեր իրականացնող ավիաընկերությունների (օրինակ՝ «Լուֆթհանզա» (Lufthansa), «ԷյրՖրանս» (AirFrance), «ՖլայԴուբայ» (FlyDubai), «ՎիզԷյր» (WizzAir), «Ավստրիական ավիաուղիներ» (Austrian Airlines), «Էգեյան ավիաուղիներ» (Aegean Airlines) և/կամ այլ) հետ

համագործակցության շրջանակներում մարկետինգային ծառայությունների (Հայաստանի մասին տեղեկատվական նյութերի տպագրման, տվյալ ավիաընկերությունների թվային հարթակներում Հայաստանի՝ որպես զբոսաշրջային գրավիչ ուղղության ներկայացման, գովազդների տեղադրման և այլ ծառայությունների) ձեռքբերման վրա *(հավելված 3, կետ 2.2):*

2.3 Հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին առնվազն 10 գովազդատեղեկատվական հոդվածի պատվիրում՝ անմիջականորեն հեղինակավոր պարբերականին կամ միջնորդավորված՝ մասնագիտացված ընկերությունների միջոցով ԱՄԷ հայտնի պարբերականներում՝ (օրինակ՝ Black Watch Communications LLC, Khaleej Times և/կամ այլն), բրիտանական (օրինակ՝ National Geographic, Wonderlust, The Guardian Travel Guide (իրավաբանական անվանումը՝ APL LLC) և BBC Wildlife կամ Հոլդինգի այլ պարբերականներում (BBC Holding)), ֆրանսիական (օրինակ՝ Le Figaro) պարբերականում, ամերիկյան հեղինակավոր պարբերականներում (օրինակ՝ Forbes, Lonely planet), ինչպես նաև հեղինակավոր այլ պարբերականներում (*հավելված 3, կետ 2.3):*

Զբոսաշրջության կոմիտեն միջազգային պարբերականների ընտրությունը կատարում է կիրառելի ընթացակարգ(եր)ի հիման վրա, իսկ ընտրության կատարման պահին նման ընթացակարգերի բացակայության դեպքում՝ հիմք ընդունելով հետևյալ սկզբունքները՝

ա) պարբերականի թիրախային լսարանը պետք է համապատասխանի Զբոսաշրջության կոմիտեի տարեկան մարկետինգային գործողությունների ծրագրում ընդգրկված թիրախային շուկաներին.

բ) պարբերականը պետք է ունենա ճամփորդական ուղղվածություն, թիրախավորի անհատ զբոսաշրջիկներին, հանդիսանա ոլորտային առցանց հարթակ, որը տեղեկություններ է տրամադրում զբոսաշրջիկներին ճամփորդական ուղղությունների վերաբերյալ.

գ) պարբերականը պետք է ներկայացված լինի բոլոր հայտնի սոցիալական հարթակներում, ունենա օգտատերերի (ճամփորդողների) շտեմարան, որոնց պարբերաբար ուղարկում է անհատական ծանուցումներ.

դ) տպագիր ճամփորդական պարբերականի դեպքում, այն պարտադիր պետք է ունենա նաև առցանց հարթակ/կայք, որտեղ տեղ կգտնեն և կտարածվեն պատվիրված հոդվածները նույնպես:

2.4 ճանաչողական այցերի կազմակերպում՝ թիրախային շուկաներից (եվրոպական, արաբական, ասիական, ինչպես նաև ՌԴ և/կամ այլ երկրներ) այց Հայաստան առնվազն 55 անձանց համար (*հավելված 3, կետ 2.4):*

2.5 գովազդատեղեկատվական նյութերի (առնվազն 15 հազար հատ) **ստեղծում, ձեռքբերում՝** Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիությանն ուղղված գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, թարգմանություն տարբեր լեզուներով և բովանդակությամբ, տպագրություն *(հավելված 3, կետ 2.5):*

2.6 լուսանկարահանում, տեսանկարահանում՝ Հայաստանի զբոսաշրջային տեսարժան վայրերի լուսանկարահանում, տեսանկարահանում՝ 1 փաթեթ, այդ թվում

ա) 90-120 վայրկյան տևողությամբ առնվազն 2 տեսահոլովակի (այդ թվում՝ յուրաքանչյուրի 15 վրկ, 30 վրկ, 60 վրկ տևողությամբ կարճ տարբերակների) պատրաստում, տրամադրում Զբոսաշրջության կոմիտե,

բ) մարկետինգային տեսանյութեր պատրաստելու և տարածելու նպատակով առնվազն 30 REEL ձևաչափով տեսաբազայի ստեղծում, տրամադրում Զբոսաշրջության կոմիտե,

գ) Հայաստանի մշակութային, գաստրո և գինի, բնության, արկածային և այլ ուղղությունները ներկայացնող առնվազն 500 հատ լուսանկարների շարքի ստեղծում, տրամադրում Զբոսաշրջության կոմիտե

(Միջոցառումն իրականացնել Զբոսաշրջության կոմիտեի պատվերին համապատասխան, Զբոսաշրջության կոմիտեին տրամադրվող բոլոր նյութերը ներկայացնել SSD 4TB սարքի միջոցով) (*հավելված 3, կետ 2.6):*

2.7 թվային և սոցիալական հարթակների վարում՝ 2026 թվականի (12 ամիս) ընթացքում թվային և սոցիալական հարթակների վարում՝ ուղղված թիրախային (եվրոպական, արաբական, ասիական, ամերիկյան, ԱՊՀ և այլ) երկրներում, ինչպես նաև Հայաստանում, Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացմանն ու խթանմանը, Հայաստանի՝ որպես զբոսաշրջային գրավիչ երկրի ճանաչելիության բարձրացմանը: Հայաստանի մասին իրազեկվածության բարձրացում և նպատակային այցելուների գրավում՝ սոցիալական հարթակներում (FB, Instagram, YouTube, Tiktok, Google Ads, Armenia.travel, Linkedin և/կամ այլն) գովազդատեղեկատվական նյութերի տեղադրման միջոցով *(հավելված 3, կետ 2.7):*

2.8 Armenia.travel վեբ - կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում, տեքստային բովանդակության ստեղծում՝ 2026 թվականի (12 ամիս) ընթացքում Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող

(Armenia.travel) կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում, կայքի սոցիալական պաշտոնական էջերի հետևորդների թվային ցուցանիշների աճի ապահովում, կայքի ներքին որոնման համակարգերի գլոբալ օպտիմալացման (SEO) ծառայության մատուցում, Armenia.travel վեբկայքի համար առնվազն 15 բլոգ-փոստերի տեքստային բովանդակության ստեղծում առնվազն հայերենով և անգլերենով (*հավելված 3, կետ 2.8*):

3.**Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացման, փաթեթավորման և խթանման նպատակով** նախատեսվում է աջակցություն Հայաստանում իրականացվող առնվազն յոթ փառատոնի և առնվազն մեկ ներքին զբոսաշրջային ցուցահանդեսի կազմակերպմանը և խթանմանը (*հավելված 3, կետեր 3.1-3.2):*

4. **Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում.** սույն ենթակետով սահմանված արդյունքին հասնելու նպատակով նախատեսված է աջակցություն՝

4.1 առնվազն 2 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի գործունեությանը (*հավելված 3, կետ 4.1).*

4.2 առնվազն 3 զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը (*հավելված 3, կետ 4.2).*

4.3 Զբոսաշրջության կրթության բարելավման նպատակով նախատեսվում է առնվազն 3 դասընթացների կազմակերպում՝ առնվազն 50 որակյալ վերապատրաստված մասնագետի ապահովմամբ (*հավելված 3, կետ 4.3)*

4.3.1 զբոսաշրջության և/կամ հյուրընկալության ոլորտի աշխատողների համար,

4.3.2 արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար:

5.Զբոսաշրջության ոլորտում ընդլայնված և ակտիվացած **միջազգային համագործակցություն** *(հավելված 3, կետ 5)***,** այդ թվում՝

5.1. առնվազն 2 միջազգային միջոցառումների կազմակերպում

5.1.1 միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության, ինչպես նաև սփյուռքի հետ կապերի զարգացման շրջանակներում միջազգային առնվազն 1 միջոցառման կազմակերպում.

5.1.2 միջազգային կապերի զարգացման նպատակով առնվազն 1 միջոցառման կազմակերպում.

5.2 օտարերկրյա պետությունների հետ համագործակցության ակտիվացում*:*

4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

14. Զբոսաշրջության զարգացման 2026 թվականի ծրագրի ֆինանսավորման հիմնական աղբյուրը Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեն է, ինչպես նաև՝ օրենքով չարգելված այլ միջոցները (մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի համաֆինանսավորմամբ): Ֆինանսավորման բյուջեն կազմում է 800.0 մլն ՀՀ դրամ:
15. Հավելված 2-ով նախատեսված միջոցառումներն իրականացվում են դրամաշնորհի հատկացման մրցութային կարգով՝ բացառությամբ
    1) N2 հավելվածի 1-ին կետի 1.1-ին և 1.2-րդ ենթակետերով, 2-րդ կետի 2.7-րդ և 2.8-րդ ենթակետերով, 3-րդ կետի 3.2-րդ ենթակետով և 5-րդ կետի 5.1.1-րդ և 5.1.2-րդ ենթակետերով նախատեսված միջոցառումների, որոնք նախատեսվում են իրականացվել գնումների գործընթացով.
    2) N2 հավելվածի 2-րդ կետի 2.1-րդ, 2.2-րդ և 2.3-րդ ենթակետերով նախատեսված միջոցառումների, որոնք նախատեսվում են իրականացվել օտարերկրյա կազմակերպություններին անմիջական փոխանցմամբ:

Հավելված N 2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2025 թվականի դեկտեմբերի -ի
N -Լ հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
2026 ԹՎԱԿԱՆԻ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Վերստուգելի չափանիշը	Կատարողը (համա-կատարողները)	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7
1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ						
1.1	**Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի սպասարկում**	Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի օգտագործմամբ զբոսաշրջության ոլորտի վիճակագրական տվյալների հավաքագրում՝ ըստ զբոսաշրջային այցելությունների աշխարհագրական բաշխվածության, սեռատարիքային կազմի, կրկնվող այցելությունների, Գործող համակարգչային ծրագրի սպասարկում	Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի տարեկան (*12 ամիս*) սպասարկում	Զբոսաշրջության կոմիտե	2026թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
1.2	**Travelinsights հարթակի սպասարկում**	Travelinsights հարթակի 10 ամիս սպասարկման ապահովում՝ արհեստական բանականության գործիքակազմի շարունակական	Travelinsights հարթակի 10 ամիս սպասարկում	Զբոսաշրջության կոմիտե	2026թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով

		բարելավմամբ և նոր ֆունկցիոնալության ինտեգրմամբ				չարգելված այլ աղբյուրներ
1.3	**«Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակում և կիրարկում**	Համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հաստատում կամ ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Առնվազն 3 ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակում և ընդունում	Զբոսաշրջության կոմիտե	2026թ. ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջում
2. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐԿԵՏԻՆԳԱՅԻՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ						
2.1	**Մասնակցություն միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում ու խթանում. հայկական և օտարերկրյա զբոսաշրջային օպերատորների միջև գործարար կապերի հաստատում. ցուցահանդեսներին պատշաճ մասնակցություն	Առնվազն 4 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին մասնակցություն՝ ապահովելով յուրաքանչյուր ցուցահանդեսին առնվազն 5 զբոսաշրջային օպերատորի մասնակցություն (Մասնակցությունը՝ ըստ Զբոսաշրջության կոմիտեի ընտրության)	Զբոսաշրջության կոմիտե (Միջազգային ցուցահանդես կազմակերպող արտերկրյա կազմակերպություն)	2026թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.2	**Համագործակցություն միջազգային գործընկերների հետ**	Հայաստանի մասին տեղեկատվական նյութերի տպագրում, միջազգային ընկերությունների կամ ավիաընկերությունների թվային հարթակներում Հայաստանի՝ որպես զբոսաշրջային գրավիչ ուղղության ներկայացնում, գովազդների տեղադրում	Առնվազն 4 միջազգային գործընկերների հետ համագործակցության շրջանակներում մարկետինգային ծառայությունների ձեռքբերում (Գործընկերները ընտրվում են Զբոսաշրջության կոմիտեի կողմից)	Զբոսաշրջության կոմիտե (Միջազգային կազմակերպություններ, ավիաընկերություններ շահագործող	2026 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		Համագործակցություն միջազգային տարբեր ընկերությունների (օրինակ՝ BBC, Expidia և այլ) հետ, ինչպես նաև դեպի Հայաստան չվերթեր իրականացնող ավիաընկերությունների հետ		արտերկրյա կազմակերպություններ)		
2.3	**Հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրում**	Հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին հոդվածների տպագրում՝ ներկայացնելով Հայաստանը որպես զբոսաշրջային գրավիչ ուղղություն և ծրագրավորելով Հայաստան այցելությունը՝ որպես առաջիկա ճանապարհորդությունների մեջ առաջնահերթություն Հայաստանի մասին գովազդային հոդվածներ՝ սոցիալական հարթակներում տարածելու և հարթակների ներգրավվածությունը բարձրացնելու համար	Առնվազն 10 հեղինակավոր պարբերականներում Հայաստանը ներկայացնող նյութերի հրապարակում (Միջոցառումն իրականացնել Զբոսաշրջության կոմիտեի պատվերին համապատասխան)	Զբոսաշրջության կոմիտե (Օտարերկրյա հեղինակավոր պարբերականներ ներկայացնող արտերկրյա կազմակերպություններ)	2026 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.4	**Ճանաչողական այցերի կազմակերպում**	Ճանաչողական այցերի կազմակերպում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության բարձրացում. Զբոսաշրջային հոսքերի ավելացում	Զբոսաշրջային տարբեր թիրախային (եվրոպական, արաբական, ասիական, ինչպես նաև ՌԴ, և/կամ այլ երկրներ) երկրներից առնվազն 55 անձանց համար ճանաչողական այցերի կազմակերպում՝ ներառելով հյուրանոցային,	Զբոսաշրջության կոմիտե	2026թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			տրանսպորտային, զբոսավարի, սննդի և այլ ծառայություններ (Թիրախային երկրները ընտրվում են Զբոսաշրջության կոմիտեի կողմից, միջոցառումն իրականացնել զբոսաշրջության կոմիտեի գրավոր պատվերին համապատասխան)			
2.5	**Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձեռքբերում**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացման և խթանման նպատակով գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, թարգմանություն՝ տարբեր լեզուներով և բովանդակությամբ, և տպագրություն	Առնվազն 15.000 հատ գովազդատեղեկատվական նյութեր՝ բրոշյուր, քարտեզ, տեղեկատվական թերթիկ և այլ նյութեր (Միջոցառումն իրականացնել Զբոսաշրջության կոմիտեի գրավոր պատվերին համապատասխան)	Զբոսաշրջության կոմիտե	2026թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.6	**Լուսանկարահանում, տեսանկարահանում**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում և խթանում Լուսանկարների և տեսանյութերի բազայի ձևավորում, համալրում	1 մեկ փաթեթ, այդ թվում՝ 1)90-120 վայրկյան տևողությամբ առնվազն 2 տեսահոլովակի (այդ թվում՝ յուրաքանչյուրի 15 վրկ, 30 վրկ, 60 վրկ. տևողությամբ կարճ տարբերակների) պատրաստում, տրամադրում Զբոսաշրջության կոմիտե 2) մարկետինգային տեսանյութեր պատրաստելու և տարածելու նպատակով առնվազն 30 reel ձևաչափով տեսաբազայի ստեղծում, տրամադրում Զբոսաշրջության կոմիտե	Զբոսաշրջության կոմիտե	2026թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			3) Հայաստանի մշակութային, գաստրո, արկածային և այլ ուղղությունները ներկայացնող առնվազն 500 հատ լուսանկարների շարքի ստեղծում, տրամադրում Զբոսաշրջության կոմիտե (Միջոցառումն իրականացնել Զբոսաշրջության կոմիտեի պատվերին համապատասխան, Զբոսաշրջության կոմիտեին տրամադրվող բոլոր նյութերը ներկայացնել SSD 4TB սարքի միջոցով)			
2.7	**Թվային և սոցիալական հարթակների վարում**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի՝ համաշխարհային շուկաներում պատշաճ ներկայացում և խթանում. Հայաստանի մասին իրազեկվածության բարձրացում. Հայաստանի զբոսաշրջային արդյունքի վերաբերյալ տեղեկատվության տարածում թվային հարթակներում Թվային և սոցիալական հարթակների վարում, նպատակային այցելուների գրավում սոցիալական հարթակներում	Տարվա (*12 ամիս*) ընթացքում թվային և սոցիալական հարթակների վարում՝ ուղղված թիրախային (եվրոպական, արաբական, ասիական, ամերիկյան, ԱՊՀ և այլ) երկրներում, ինչպես նաև Հայաստանում, Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացմանն ու խթանմանը, Հայաստանի՝ որպես զբոսաշրջային գրավիչ երկրի ճանաչելիության բարձրացմանը: Հայաստանի մասին իրազեկվածության բարձրացում և նպատակային այցելուների գրավում սոցիալական հարթակներում ((FB, Instagram,	Զբոսաշրջության կոմիտե	2026թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			YouTube, Tiktok, Google Ads, Armenia.travel, Linkedin և/կամ այլն)), գովազդատեղեկատվական նյութերի տեղադրում թիրախային երկրների համար (Թիրախային երկրները ընտրվում են Զբոսաշրջության կոմիտեի կողմից)			
2.8	**Armenia.travel վեբ - կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում, տեքստային բովանդակության ստեղծում**	Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող (Armenia.travel) կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում. կայքի ներքին որոնման համակարգերի գլոբալ օպտիմալացման (SEO) ծառայության մատուցում, կայքի բովանդակության հայերեն թարգմանության ապահովում և թարմացում կայքի սոցիալական պաշտոնական էջերի հետևորդների թվային ցուցանիշերի աճի ապահովում, թվային մարկետինգային գործիքների միջոցով իրականացվող ծրագրերի՝ այդ թվում մարկետինգային և խթանման միջոցառումների	Տարվա (*12 ամիս*) ընթացքում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացման համար Armenia.travel կայքի անընդմեջ և անխափան աշխատանքի ապահովում, ծրագրային սպասարկում, կայքի շահագործման ընթացքում առաջացած ծրագրային խնդիրների լուծում, կառավարում, կայքի և Զբոսաշրջության կոմիտեի տարբեր ծրագրերի համար անհրաժեշտ թվային առցանց գործիքների ձեռքբերում, ծրագրերի արդյունավետ իրականացումն ապահովելու համար, կայքի ներքին որոնման համակարգերի գլոբալ օպտիմալացման (SEO) ծառայության մատուցում, կայքի համար առնվազն 15 բլոգ-փոստերի տեքստային	Զբոսաշրջության կոմիտե	2026թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

		արդյունավետության բարձրացում, Հայաստանի զբոսաշրջային առաջարկը ներկայացնող մրցունակ տեքստային բովանդակության մշակում, թարգմանություն՝ ըստ անհրաժեշտության	բովանդակության ստեղծում առնվազն հայերենով և անգլերենով (Միջոցառումն իրականացվում է Զբոսաշրջության կոմիտեի պատվերին համապատասխան)			
3. ՀԱՅԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՈՒՄ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԽԹԱՆՈՒՄ						
3.1	**Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը**	Համայնքներում զբոսաշրջության և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը նպաստում. Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում՝ տեղական ավանդույթների ու մշակույթի վերականգնում, հյուրընկալող և շրջակա համայնքներում տնտեսական և մարդկային ներուժի բացահայտում ու զարգացում	Հայաստանում առնվազն 7 փառատոնի կազմակերպմանը աջակցություն	Զբոսաշրջության կոմիտե	2026թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.2	**Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում**	Ներքին զբոսաշրջության զարգացում Համագործակցություն Հայաստանի բոլոր մարզերի հետ, զբոսաշրջային առաջարկների ներկայացում	Առնվազն մեկ ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում	Զբոսաշրջության կոմիտե	2026թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

4. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ						
4.1	**Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը**	Հայաստանում զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների համակարգի ձևավորում՝ տեղեկատվական և մասնագիտական տեղեկատվության տրամադրում, գովազդատեղեկատվական նյութերի տարածում, առնվազն մեկ միջոցառման կազմակերպում կամ աջակցություն	Առնվազն 2 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի գործունեությանն աջակցություն.	Զբոսաշրջության կոմիտե	2026թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.2	**Աջակցություն զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը**	ՀՀ մարզերում զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների գործունեության ապահովում, մարզի զբոսաշրջային ներուժի վերհանում. Զբոսաշրջության դիվերսիֆիկացում՝ նոր զբոսաշրջային ուղղությունների ու պրոդուկտների ստեղծում, ամեն մարզում առնվազն մեկ նոր առաջարկի ձևավորում	ՀՀ մարզերում առնվազն 3 զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը աջակցություն	Զբոսաշրջության կոմիտե	2026թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.3	**Զբոսաշրջության կրթության բարելավում՝ զբոսաշրջության ոլորտում դասընթացների իրականացնում, վերապատրաստում**	Զբոսաշրջության ոլորտը բարձրակարգ կադրերով ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ զբոսաշրջության ոլորտում դասընթացների իրականացնում, վերապատրաստում	- առնվազն 3 դասընթաց, - առնվազն 50 որակյալ վերապատրաստված մասնագետ, այդ թվում՝	Զբոսաշրջության կոմիտե	2026 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.3.1	**Զբոսաշրջության և/կամ հյուրընկալության**		- առնվազն 2 դասընթաց,			

	ոլորտի աշխատողների համար դասընթացների իրականացնում, վերապատրաստում		- առնվազն 40 որակյալ վերապատրաստված մասնագետ զբոսաշրջության և/կամ հյուրընկալության ոլորտում, - վերապատրաստման հասանելիության ապահովում մարզերում			
4.3.2	**Արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար դասընթացի իրականացնում, վերապատրաստում**		- առնվազն 1 դասընթաց, - առնվազն 10 որակյալ վերապատրաստված մասնագետ արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար, -վերապատրաստման հասանելիության ապահովում մարզերում:			
5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ						
5.1	**Միջազգային միջոցառումների կազմակերպում**	Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացման և միջազգային կապերի զարգացման նպատակով առնվազն 2 միջոցառման կազմակերպում	առնվազն 2 միջոցառման կազմակերպում (Միջոցառմանն առնչվող տեխնիկական հարցերը՝ Զբոսաշրջության կոմիտեի հետ համաձայնեցմամբ)	Զբոսաշրջության կոմիտե	2026թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված
5.1.1	**Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության, ինչպես նաև սփյուռքի հետ կապերի**		առնվազն մեկ միջազգային միջոցառման կազմակերպում (Միջոցառմանն առնչվող տեխնիկական հարցերը՝ Զբոսաշրջության կոմիտեի հետ համաձայնեցմամբ)			

	զարգացման շրջանակներում միջազգային միջոցառման կազմակերպում					այլ աղբյուրներ
5.1.2	**Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառման կազմակերպում**		առնվազն մեկ միջոցառման կազմակերպում (Միջոցառմանն առնչվող տեխնիկական հարցերը՝ Զբոսաշրջության կոմիտեի հետ համաձայնեցմամբ)			
5.2	**Օտարերկրյա պետությունների հետ համագործակցության ակտիվացում**	Զբոսաշրջության բնագավառում օտարերկրյա պետությունների հետ երկկողմ կամ բազմակողմ համագործակցության ակտիվացում, այդ թվում՝ իրավապայմանագրային հարաբերությունների զարգացման միջոցով	Զբոսաշրջության ոլորտում օտարերկրյա պետությունների հետ երկկողմ կամ բազմակողմ իրավապայմանագրային հարաբերություններ	Զբոսաշրջության կոմիտե	2026թ. ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջում

Հավելված N3
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2025 թվականի դեկտեմբերի -ի N -Լ հրամանի

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ
2026 ԹՎԱԿԱՆԻ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

(հազար ՀՀ դրամ)

Հոդված		ԾԱԽՍԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	չափման միավոր	քանակ	2026թ. ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք գումարները առանց ԱԱՀ	ԱԱՀ	2026թ. Ընդամենը ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք գումարները
	1	**1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ**			4750.0	950.0	5700.0
4239	1.1	Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի տարեկան սպասարկում	ամիս	12	1250.0	250.0	1500.0
4239	1.2	Travelinsights հարթակի սպասարկում	ամիս	10	3500.0	700.0	4200.0
	2	**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**			503333.3	28666.7	532000.0
4239	2.1	Մասնակցություն միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին	հատ	առնվազն 4	250000.0	0.0	250000.0
4239	2.2	Համագործակցություն միջազգային գործընկերների հետ	հատ	առնվազն 4	70000.0	0.0	70000.0
4239	2.3	Հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրում	հատ	առնվազն 10	40000.0	0.0	40000.0
4639	2.4	Ճանաչողական այցերի կազմակերպում	մարդ	առնվազն 55	63333.3	12666.7	76000.0
4639	2.5	Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձեռքբերում	հատ	առնվազն 15000	20000.0	4000.0	24000.0
4639	2.6	Լուսանկարահանում, տեսանկարահանում	փաթեթ	1	15000.0	3000.0	18000.0
4239	2.7	Թվային և սոցիալական հարթակների վարում	ամիս	12	20000.0	4000.0	24000.0
4239	2.8	Armenia.travel վեբ - կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում, տեքստային բովանդակության ստեղծում	ամիս	12	25000.0	5000.0	30000.0
	3	**ՀԱՅԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՈՒՄ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԽԹԱՆՈՒՄ**			109416.7	21883.3	131300.0
4639	3.1	Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը	հատ	առնվազն 7	91666.7	18333.3	110000.0
4239	3.2	Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում	հատ	առնվազն 1	17750.0	3550.0	21300.0
4639	4	**ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**			29166.7	5833.3	35000.0
4639	4.1	Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը	հատ	առնվազն 2	6000.0	1200.0	7200.0
4639	4.2	Աջակցություն զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը	հատ	առնվազն 3	10000.0	2000.0	12000.0
4639	4.3	Զբոսաշրջության կրթության բարելավում՝ զբոսաշրջության ոլորտում դասընթացների իրականացնում, վերապատրաստում	հատ	առնվազն 3	13166.7	2633.3	15800.0
	4.3.1	Զբոսաշրջության և/կամ հյուրընկալության ոլորտի աշխատողների համար դասընթացների իրականացնում, վերապատրաստում	հատ	առնվազն 2	9166.7	1833.3	11000.0
	4.3.2	Արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար դասընթացի իրականացնում, վերապատրաստում	հատ	առնվազն 1	4000.0	800.0	4800.0
	5	**Միջազգային համագործակցություն**			80000.0	16000.0	96000.0
4239	5.1	Միջազգային միջոցառումների կազմակերպում	հատ	առնվազն 2	80000.0	16000.0	96000.0
	5.1.1	Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության,ինչպես նաև սփյուռքի հետ կապերի զարգացման շրջանակներում միջազգային միջոցառման կազմակերպում	հատ	առնվազն 1	62500.0	12500.0	75000.0
	5.1.2.	Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառման կազմակերպում	հատ	առնվազն 1	17500.0	3500.0	21000.0
		ԸՆԴԱՄԵՆԸ			726666.7	73333.3	800000.0